

տրամադրութեան տակ: Ուրեմն անտարակոյս Բաբելոն կը ստանար իր բուրդը, կարելոր մասով մը բրդառատ Հայաստանէն:

Նոյն ատեն խնդիր է թէ կարելի՞ է գորղարուեստին զարգացումը փնտռել երկրի մը մէջ՝ որ զուրկ է բուրգէ: Արդեօք իրաւունք չունինք մտածելու որ գորղարուեստին զարգացուցիչները Բաբելոնի մէջ, պէտք ունեցած բուրդին պէս, Հայաստանէն կու գային: Հեղինակաւոր Ռաուլինսըն աներկրայ ալք մասին կը գրէ. «Վերջին ատենները Բաբելոն մասնաւորապէս հռչակուեցաւ իր հագուստներուն եւ գորգերուն համար: Եւ այն փաստերը որ մենք ունինք՝ ցոյց կու տան որ այս երկու արտադրութիւններն ալ նկատելի կարելիութիւն ստացան Ռաւլինսըններուն ժամանակ»⁽⁴⁸⁾: Ասոնց «Այժը եւ ոչխարը մանր էր, եւ կ'արտադրէին քիչ ու տեսակ մը կոշտ բուրդ»⁽⁴⁹⁾:

Կը դժուարանամ աւելի անդրադարձումներ ընել այս նախնական ծանօթութեանց վրայ: Ժամանակը եւ յաւելումական պեղումներ, պրպտումներ անտարակոյս շատ բան ունին լուսաւորելիք թէ՛ մեր այս եւ թէ՛ ուրիշ նիւթերու մասին:

Բաբելական նախկին կայսրութեան սահմաններուն մէջ կազմակերպուեցաւ Պաղտատի խալիֆայութիւնը: Պաղտատ եղաւ կարելոր խոնարան մը հպատակեալ ժողովուրդներու մշակոյթին: Մենք տեսնենք որ Հայերը կանուխէն նիւթապէս ստաւարած են այդ բազմազոյն խճանկարին, որուն արարական գեղարուեստ կոչումը կու տանք այժմ: Արաբ պատմիչներ գովքը կը հիւսեն հայ գորգերու: Իսկ Ռաւլտուն է գարուն Հայոց կողմէ Արաբ խալիֆաներուն տրուած բնահարկերուն գլուխը կը նշանակէ տարեկան քսան գորգ: Հարկէն զատ՝ բազմաթիւ յիշատակութիւններ ալ կան ցոյց տուող որ Հայաստանէն տարուած աւարին մէկ խոշոր մասը բաժին կը հանուէր Պաղտատի խալիֆային: Ասկէ զատ նուէրով, եւ վաճառականութեամբ ալ, անտարակոյս, մեծ քանակութեամբ գորգեր կը տարուէին Հայաստանէն Պաղտատ: Ուալթըր Ա. Հաուլէյ կը գրէ. «Սալիֆայութեան ընթացքին (632էն 1258 Քրիստոսի) Մահմետական տիրապետողներ, նուիրուեցան ճոխութեան, պահեցին գեղարուեստական գանձերը իրենց յաղթած հպատակներուն եւ քաջալերեցին վերանորոգուած ջանքերով: Ասիկա մասնաւորապէս ճիշդ է Սիւրիոյ եւ Եգիպտոսի խալիֆաներուն համար: Կապերա մը կը վարդարէր Եգիպտոսի խալիֆա Հիւլամի խնձոյքի սրահը, որ մեռաւ Քրիստոսի 734 թուին, ոսկեթել մե-

⁽⁴⁸⁾ Անդ, էջ 64: Ազբէր Arrian «Exp. Alex». VI. p. 29: Athenaeus Deipnosoph. V, p. 127.

⁽⁴⁹⁾ Անդ, էջ 27: Եւ Layard «Ninveh and Babylon», p. 566.

Հերոդոտոս, Ա. գլուխ, 194. կը վկայէ Հայաստանէն Բաբելոն լատանաւորով առեւարական փոխադրութեան: Իսկ Յայանութեան ԺԸ. 12 եւ 16. կու տայ Բաբելոն տարուած ապրանքին տեսակը. «զրեան... բէնգի եւ ծիրանոյ եւ որդան... անաթ... պղնձոյ եւ երկաթոյ», բոլորն ալ Հայաստանի արտադրութիւններ: